ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման IX նստաշրջանի արդյունքների մասին
(05.02.07թ. - 07.06.07թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման իններորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 4 քառօրյա և 2 արտահերթ նիստ՝ 1-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 1-ը՝ ՀՀ Նախագահի: 2007թ. ապրիլի 30-ից մայիսի 3-ի և մայիսի 21-24-ի հերթական չորսօրյա նիստերը չկայացան՝ քվորումի բացակայության պատճառով:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 90 օրենքի նախագիծ, որից 51-ը՝ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 38-ը՝ ԱԺ պատգամավորներինը, իսկ 1-ը՝ համատեղ: Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 28 օրենքների նախագծերով, որից 21-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 7-ը՝ ԱԺ պատգամավորներինը:

ՀՀ Կառավարության ներկայացրած 72 նախագծերից 16-ը ՀՀ Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 118 օրենքների նախագծերից գարնանային և արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել են 61-ը: Դրանցից 5-ը ընդունվել են առաջին ընթերցմամբ (2-ը կառավարության նախաձեռնություններն էին, 3-ը՝ ԱԺ պատգամավորներինը), 36-ը՝ երկրորդ ընթերցմամբ, որոնցից 35-ը՝ ամբողջությամբ (31-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը ԱԺ պատգամավորների), 11-ը՝ երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (9-ը՝ ՀՀ Կառավարության, 2-ը ԱԺ պատգամավորների նախաձեռնություններն էին):

ԱԺ-ը քվեարկության արդյունքներով մերժեց 8 օրենքների նախագծերի և 1 օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը: Դրանք են՝

1. ՀՀ հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին.

2. Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին.

3. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին.

4. ա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին,

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին.

5. «Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին.

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին.

7. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

8. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին.

9. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին:

Նշված նախագծերից 8-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 1-ը՝ ԱԺ պատգամավորներինը («Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ): Վերջինս կրկին է դրվել շրջանառության մեջ և այս անգամ ընդունվել ԱԺ պատգամավորների կողմից:

ՀՀ կառավարության նախաձեռնած «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը միացվել է ՀՀ կառավարության նախաձեռնած և ԱԺ-ում շրջանառության մեջ գտնվող օրենքների նախագծերի փաթեթին:

«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (22.01.2007թ. Ս. Կարայան) և «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (30.01.2007թ. Գ. Խաչատրյան) օրենքների նախագծերը նախ առանձին առանձին քննարկվեցին և ընդունվեցին առաջին ընթերցմամբ, այնուհետև նախագծերը միացվեցին և որպես միացյալ նախագիծ քննակվեց և ընդունվեց 2-րդ ընթերցմամբ:

ԱԺ-ը քվեարկությամբ ընդունեց ՀՀ նախագահի առաջարկություններն ու առարկությունները՝ կապված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հետ:

Նախորդ նստաշրջանի ընթացքում ԱԺ-ի կողմից մերժված «Ճանապարհային երթևկության անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը 9-րդ նստաշրջանում կրկին դրվեց շրջանառության մեջ և ընդունվեց որպես օրենք:

Ամբողջությամբ ընդունված 46 օրենքներից 40-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 6-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը:

Ընդունված 46 օրենքներից 11-ը մայր օրենքներ են (9-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություններ, 2-ը՝ ԱԺ-ի պատգամավորների), իսկ 35-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (31-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը՝ ԱԺ-ի պատգամավորների):

Ամբողջությամբ ընդունված 46 օրենքներից 22-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 4-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 14-ը՝ իրավական դաշտից են, իսկ 5-ը՝ երկրի պաշտպանության և ազգային անվտանգության:

Նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 5 օրենքների նախագծերից 4-ը ընդունվեցին ամբողջությամբ (1-ը՝ ՀՀ Կառավարության, 3-ը ԱԺ պատգամավորներ), իսկ 1-ը այդպես էլ չքննարկվեց (ԱԺ պատգամավորների):

Ազգային ժողովը լսեց ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության 2007թ. տարեկան ծրագիրը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 11 միջազգային պայմանագրեր, որոնցից 1-ը՝ կրթության, 1-ը՝ մշակութային, 1-ը՝ առողջապահության, 1-ը՝ իրավական, 7-ը՝ ֆինանսատնտեսական համագործակցության ոլորտից են:

Նստաշրջանի ընթացքում 1 պատգամավոր գրավոր և 11 պատգամավոր բանավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: Փետրվարի 28-ին, մարտի 21-ին, ապրիլի 11-ին և մայիսի 23-ին կառավարության հետ հարց ու պատասխանը չի կայացել քվորումի բացակայության պատճառով: 40 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 7-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: